ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆՑ
(1878—1959)

Փետրվարի 12-ին, խոր ծերության մեջ, Թբիլիսիում ի Տեր հանգչավ արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Տեր-Հարությունյանի Պողոսյանցը։

Հանգուցյալը ծնվել էր Սպիտակում, 1878 թվականի ապրիլին։ 1895—1897 թվականներին սովորել էր Գևորգյան ճեմարանում, և ապա 1900—1905 թվականներին ծառայել Բաքվի և Թբիլիսիի հայ եկեղեցիներում՝ որպես դպիր։

1905 թվականին ձեռնադրվում է քահանա Սևանի առաջնորդ Տ. Սարգիս եպիսկոպոս Փիլոյանից և քահանայագործում մինչև 1917 թվականը, իր ծննդավայր գյուղում, զբաղվելով նաև ուսուցչությամբ։

Հանգուցյալը հավատավոր, պարտաճանաչ, Հայ Եկեղեցու կարգ ու կանոնին նախանձախնդիր հոգևորական էր և իր արդյունավետ պաշտոնավարության համար սիրված իր ժողովրդից և Գևորգ Ե կաթողիկոսի կողմից պարգևատրված՝ ծաղկյա փիլոնով և լանջախաչով։

Հանգուցյալը զբաղվում էր նաև գրականությամբ։ Նա ունի բանաստեղծություններ, պատմվածքների, առածների, հեքիաթների և քարոզների ժողովածուներ։ Այս բոլորի հետ միաժամանակ հանգուցյալը հայ հողի զավակ էր, սիրում էր իր ազատ ժամերին զբաղվել այգեգործությամբ, մեղվապահությամբ։

Հանգուցյալի վերջին օծումը և թաղումը կատարվեց փետրվարի 15-ին Թբիլիսիում, հայոց Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում, հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի նախագահությամբ, որը դամբարանական խոսեց հանգուցյալի դագաղի վրա, ծանրանալով նրա եկեղեցական և ժողովրդին նվիրված հոգևորականի գործունեության վրա։

Հանգի՛ստ նրա հոգուն։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։